

17116

U.S.G.S.

891.99
U-30

2003
E

891.99

Վ-30

№ 8877

Բ. Լ.

Մ

Ս

Ֆ

Օ

100



պետական



գործիք

Տպարան Ա. Մ. Մանուկյանի Տպարան

Տիպոգրիա Ա. Մ. Մուգդսակովա.

1897

3742

Է Զ Դ.

Տարբառամ տպագրեց Ա. Լ. Սաֆօ
պօէման: Դեռ այդ գեղեցիկ երկի տպա-
գրութիմը չինք աւարտել, երբ նոյն
հեղինակից ստացանք բազմաթիւ փոփո-
խութիմններով երկրորդ ընագիր Սաֆօն, որ
անհամեմատ լաւ էր ստեղծագործած
նախկին ընագրից: Չը կամնալով մեր
ընթերցողներին զրկել այդ սիրուն եր-
կից եւ անյարմար համարելով Տարբա-
ռամ կրկին նոյն պօէմը տպագրել, թէեւ
հիմնական փոփոխութիմններով, նպա-
տակայարմար համարեցինք առանձին
գրքով լրյա ընծայել Սաֆօն երկրորդ
ընագրից եւ նվիրագերել մեր ընթեր-
ցողներին:

Տ. Ն.

Дозволено цензурою. Тифлисъ, 23 августа 1897 года.

թիմ Ա 23 անդրական կորուս
անու զօղ միջիկ առ ու անցու
մեն ով պահու տու պահու
անու մայստրան ընկածու պահու
ով մասու զնութ քաղաք Խոստու ու
խոնակութան ով ու անհամակա
ով խոնմու ով անդրական պահու
ով ուստի ու յաջու մայստրան
ուստի անձական պահու ով ու
անու անդրական պահու ով ուստի անց
ուստի անդրական պահու ով ուստի անց
ուստի անդրական պահու ով ուստի անց
ուստի անդրական պահու ով ուստի անց

Ս Ա Ֆ Օ

Պոէմա

«Sappho de Mitilène, poétesse inspirée de l'amour; elle se serait précipitée dans la mer du haut du rocher de Leucade, parceque le beau Phaon l'avait dédaigné...»

Histoire Grecque.

I

Ի նչպէս երազ գարնանալին
Մի գիշերւայ մեղմաշունչ,
Ի նչպէս ըստւեր գերբնալին
Մի գիշուհու ոգեշունչ.
Թեթևաքալ՝ նման վալրի

Լեռան վիթին սևաչեայ,
 Իրանն նազիկ ու չինարի,
 Մենակ, տխուը, հըրաչեայ—
 Նա թափառում էր մոլորած
 Անտառներումը թաքուն,
 Արևասփիւու, համատարած
 Դաշտերի մէջ կիսաքուն:
 Ա.փին զըւարժ ու մշտախոյս
 Գետակների էր նստում,
 Ա.փին ծովի մըրըկայոյզ
 Մոլորաքայլ պլրտում:
 Գա՝ նա էր, այն չքնաղ Սաֆօն,
 Որին ժամին հիացման
 Տըւեց պարգև մեծն Ապօլօն
 Անմահ քընար սքանչացման:
 Եւ աւիւնըն ըզմալլանքի
 Եռաց սրտում երգչուհուն
 Եւ ջերմ խանդը գուրգութանքի
 Տիրեց այդ նոր գիցուհուն:
 Հնգիւն քնարն՝ նրան հնազանդ

Խառնում էր իր հառաչը—
 Ասես սիրոյ քաղցըը աւանդ,
 Ասես վերջին իր պաչը—
 Մեղեգիի պէս ներդաշնակ
 Հառաչի հետ զեփիւոի:
 Նա Հեծեծում էր ցառւնակ՝
 Թաւուտ խորումը ծառի
 Ու մեղմ սուլող եղեգներում,
 Հեծեծում և սոհելով
 Ծովի երեսն՝ այնտեղ մարում,
 Կարծես դողով՝ ալիքներում
 Իր գաղտնիքը պահելով:



ОЛД
ГИБ

II

Սաֆօն ափին՝ այն մշտախոյս
Գետակների էր նստում,
Ափին ծովի մըրըկայոյզ
Մոլորաքայլ պլտտում:
Շուրջը պճնըւած տարածւում էր
Հելլադայի բընութիւն:
Պայծառ ու ճոխ՝ նա բացւում էր
Ի՞ր հըմալիչ թովզութիւն
Սըկի տակ մի ջերմակիծ:
Թափում էին վառ երկնքից
Թուչունների խմբերը
Բազմատեսակ երգերը:
Նարժուն սփոյցն անհուն ծովի՝
Ենչի տակը փափուկ հովի՝
Դանտէլներովն իր փրփուրի
Զարդարում էր պերճ ափերի

Կողերն անդորր, լըռակեաց:
Սյստեղ՝ ժայռ էր մենակեաց՝
Մըռայլ, խորհող մի տեսքով՝
Կախւած ջըրի ջինջ երեսին:
Սյստեղ՝ սուր էր մերկ կրծքով,
Նըման յանդուգն մի հերոսին,
Ծովի ծոցը գալիս խրւում,
Մինչ իշխում էր կատարով
Ու եզերքով երկայն փռւում՝
Իր թարմաշունչ դալարով:
Հեռուն՝ հնչիւն ոստումներով,
Սգատութեան խոստումներով,
Փրփրադէզ ու սողալով,
Յանկարծ գետակն զուրս էր փախչում
Զոբամիջից, ծովը թուչում,
Սըսդ առաջ լողալով:
Բայց երբ Եւան զուրկ դըրախտից՝
Զըկաը սփոփանք Սափօյին,
Վիրաւորւած իր սւ բախտից՝
Մաքերն ուրիշ տեղ էին:

Նըրան թախիծն էր հալածում,
Սիրոյ հուրն էր բորբոքում,
Ճակատագիրն էր հարւածում
Եւ կսկիծը մորմոքում:



III

Եւ նա նստած ժայռի գլխին —
Ծովը նինջով համակւած —
Չար Ամուրի չար աղեղին
Թոյնովն հոգին վարակւած,
Մի ջրզալին թեթև մատով
Իր քնարին է զարնում.
Զգացումն թռիչ է առնում:
Եւ ձայները բուռն կարօտով
Հեծեծում են, աղաչում,
Արտասւագին ու ջերմ խանդով
Լալիս, լալիս, հառաչում:
Մերթ կենդան, վսեմ, ուժգին,
Մերթ քնքոյշ են ու տիրագին,
Մերթ մեռնում են խոր հառաչով,
Նորից դողում հոգու ճիչով,
Մերթ խուլ ողբով հեկեկում,

Սըտապատառ փոթորկում,
Մերթ յուսավառ մի թըռիչով
Խորասուզում եթերքում...
Յանկարծ կարծես անլոյս մտքից
Խալթւած՝ նա վեր է թռչում:
Քընարն ընկնում է նրա ձեռքից,
Արցունքն այտերը թրջում:
Եւ թափառում է նա մոլոր
Անտառներումը թաքուն,
Գեղանիստ ու մշտադալար
Հովիտներում կիսաքուն...
Բայց ահա նա, չքնաղ դէմքով,
Կըկին նստած, լուսնի տակ
Իր տանջանքի անգութ կամքով
Պատրաստում է մի կըտակ,
Անմըխիթար մի դըրախտ՝
Երգերն սիրոյ ապերախտ:
Ապօլօնի կախարդական
Ու հըմալիչ յուռութքին
Նա անձնատուր՝ այն դիւթական

Ոսկէ քընարն իր կըճքին բայց մռան
Սեղմում է, և ցաւերից մայս ու ծղամ
Հիսւած ողբով՝ նա նորից առըթ ահան
Զարկում մատով աստուածալին:
Եւ ձայները, մի երկնալին
Ասես հոսանք ներդաշնակ,
Իջնում են մեղմ ալիքներով,
Իբրև թովիչ մի նըւագ,
Եւ իրանց ելեէջներով
Լցնում օդը բովանդակ:
Եւ իբր առիւծ ունկնդիր,
Զսպւած դիւթիչ այն գելգելով,
Փըրլած բաշով, ուշադիր,
Իրար ետից գլուխելով
Ալիքները ծովի սառ
Կամաց սահում են դէպ ժայռ,
Նըրա կուրճքը ողջ ցօղելով,
Արտասուքով ողողելով,
Փաղաքշանքով, շար ի շար:
Եւ քընարի հնչիւններին,

Բուռն սիրոյ կանչիւններին
Կարծես ականջ են միշտ դընում
Թեթև նիրհող ծառերը
Եւ մըտախոհ սարերը,
Եւ անտառն է հանգարտ մընում:
Շուրջն էլ զըրերն են թմրած,
Եւ ալծեամն է վեր թըռած,
Եւ մենակեաց ոստի տակ
Յաղթւած լըռում է սոխակ:



IV

Եւ օրն օրի վրալ անցնում էր
Տագնապալի, տիրագին,
Սափօն իրան մինչ յանձնում էր
Էր զըգացման շերմագին:
Եւ նրա երգերը հիացման
Ու սիրոյ նուրբ անուրջով
Եւ թախանձանքն արբեցման՝
Պաղատագին շըշունջով—
Զէին հասնում ֆաօնին,
Գեղեցկադէմ հէլլէնին:
Յափշտակւած մըտածումով
Էռոթեան վրալ աշխարհին
Եւ անհանգիստ մի հարցումով
Կեանքի մասին մարդկային՝
Սիրոյ յուղիչ ըզգացումը
Ֆաօնին էր միշտ օտար:

Մինչդեռ իրանց հիացումը,
 Տագնապը և թախանձումը
 Հելլէնուհիք սիրահար
 Խօսում էին անդադար,
 Նա միշտ պայծառ գեղեցկութեամբ՝
 Անտարբեր էր դէպի նըրանց
 Եւ նրա սիրտը, կարծես սառ ամպ,
 Սիրոյ համար էր անթափանց:
 Իսկ ընտրեալին Ալոլոնի
 Իր խոր կիրքն էր կուրացնում,
 Սիրոյ համար այն ֆաօնի
 Նա քընարն էր լացացնում:
 Եւ խալթըւած հըպարտութեամբ,
 Զերմ, հըալից իր տենչում,
 Ներքին անզուսպ մի բարկութեամբ
 Ինքն իրան էր միշտ տանջում:

ՀՅՈՒՅ

V

ՀԵԼԼԵՆՈՒՀԻՆԵՐԻ ԽՄԸՆԵՐԸ
 Պարգարենք մեր մետաքսէ
 Մազերն ծաղկէ պլըսակով,
 Քընարը թող երգ ասէ,
 Պարենք նազիկ հասակով:
 Հելլադայի երկնքի
 Կամարի տակն սիրասուն
 Ահա Էօլն մեր կեանքի
 Փըչեց հովը գովասուն:
 Ահա թաւշէ դալարը
 Անկողնու պէս է փռւում,
 Քաղցըր հնչում է լարը,
 Մինչ վերջալուն է վառւում:
 Չքնաղ կոյսեր ՀԵԼԼԱՍԻ,
 Անհոգ սրտեր թուչնակի,
 Հենց որ լոյսը նըւազի՝
 Լըսենք երգը խօսնակի:



Եւ ձայներով քաղցրագին
Միմեանց գաղտնիք շըշնջանք,
Գաղտնիքն անոյշ, սիրագին
Առւի ձայնով մըմնջանք:
Շուտով գիշերը կիջնէ,
Կը շողայ աստղն առաջին,
Խաղաղ լուսինը կելնէ՝
Վկան սիրոյ հառաջին:
Վայրեն մի նոր լոյսի տակ
Կախարդական կը լինեն,
Ցաւ ու ժըպիտը լստակ
Հանգստեան մէջ կըքընեն:
Կանաչազարդ բըրակներ
Եւ հովիտներ ծաղկալի,
Ծովի ջրեր, վտակներ
Կառնեն մի նիրհ փոփկալի:
Զքնաղ կոյսեր Հէլլասի,
Պարենք, ծաղկով զարդարւենք,
Հէնց որ լոյսը նըւազի՝
Մեղմիկ նինջով օրօրւենք:

Երիտասարդների խմբերզ
Գեղեցկուհիք մանկահասակ,
Հէլլադալի դուստրներ,
Միշտ պարեցէք, հիւսէք պըսակ—
Ուրախութեան պարգևներ:
Զեր շըթների ճոխ զարդերը,
Խոր կայծը ձեր աչքերի
Վառ բընութեան են զարդերը
Եւ պատճառ մեր վէրքերի:
Պարեցէք՝ ձեզ արբեցուցիչ
Գեղեցկութիւնն է տիրած,
Երգեցէք, ձեր հմայեցուցիչ
Չայնը մեր սիրան է գերած:
Վառ երկնի տակ, դալարի վրան
Թեթև ոտքով էք պարում.
Զեր նրբակազմ, ճըկուն իրան
Աստուածներին հրապուրում:
Եւ Ամուրն է, սիրատարփիկ
Չարաճըն խաղերով,

Զեր գէմքն անում կարմիր արփիկ
Թաքուն խօսքի խաղերով:

Բայց թէ ձեզնից մէկը չըկայ
Զեր խմբերգին ու պարում.

Նրա ցաւին ծովն է վըկայ,
Նրա սփոփանքը՝ քընարում:

Գեղեցկութեան մեծ դիցուհին՝

Սրուսեակը նախանձեց՝

Ապօլօնից երբ երգչուհին

Ուկէ քընարը գանձեց:

Եւ նրա զաւակն այն սիրաւէր

Կոյսի կեանքը խաւարեց.

Զար Սմուրը Սաֆօլի հետ

Իրան անգութ շատ վարեց:

Անգուսակ խանդի անմահ հուրը

Քնքոյշ սիրտը կըրակեց

Այն օրից, երբ սիրոյ խորը

Ցաւը կոյսին վարակեց:

Հրապարտ Փաօնն է անտարբեր,

Նըրա գդացման է օտար,

Սրուսեակը չար, անհամբեր

Վըրէժ առաւ անարդար:

Օ՛, աղերսներ գուք ուղղեցէք

Աստւածներին գըթառատ,

Զեր դիցուհուն էլ խոստացէք

Սիրոյ պարզև լիառատ:

Եւ ֆաօնի սիրտը քարի

Թո՛ղ քաղցրանայ մեղրի պէս,

Եւ հնչունը կոյսի լարի

Թո՛ղ բերկբանքը երգէ մեզ:

Հէլլէնուհիների խմներզը

Մալը է մտնում արեւը,

Զէ շարժը տերեւը,

Բընութիւնը կիսաքուն

Մեզ կանչում է դէպի քուն,

Մինչդեռ դողում է լարը

Հեծում կոյսի քընարը:

Մ'եր դիցուհին Սրուսեակ,

Գեղեցկութեան վառ պըսակ,

Արամազդին նմանեց՝
Կոյսին պատփժ սահմանեց
Եւ նրա սէրն ու քընար
Արաւ գըժոխք նրա համար:
Եւ մինչ կոյսն է հառաջում,
Կանչում, լալիս, աղաչում
Եւ իւր ձեռքերն յուսահատ,
Կոտրատում է անընդհատ,
Արուսեակը գեղադէմ
Ծիծաղում է նրբա գէմ:
Անմիտ Սաֆօ, վիրաւոր
Արտով կըմնայ սըգաւոր,
Սիրուն Թաօնն ջերմ սիրով
Արուսեակի համըոյըով
Պէտք է միայն յագենայ,
Հեշտանքի մէջ քընանայ:
Աստուածներն են սահմանել,
Բախտը պառկերը մանել:
Մենք խղճում ենք Սաֆօլին,
Նրա տանջանքը սիրալին,

Բայց մեծ է մեր Արուսեակ,
Անմահ սիրոյ ալդ պըսակ:
Դէհ մեր պարը դադարենք,
Մեր սիրածին մենք փարենք,
Մայր է մտնում արեր,
Զէ շարժւում տերեւը,
Բընութիւնը կիսաքուն
Մեզ կանչում է դէպի քուն:



VI

Գիշերալին երկինքը լայն
Խաղաղանինջ իւր ծոցում
Ամփոփել է երկիրն համայն:
Իր լայն քօղն է նա գըցում,
Իբր նըբահիւս մի սարդոստայն,
Դաշտերի վրայ ու ծաղկանց,
Անտառի վրայ անթափանց:
Լէվկադեալի լուսինն իր վառ
Լոյսն է թափում դէպի ցած,
Իր սատաֆէ գեղանըկար
Լայն օղակով պըսակւած:
Հովը թեթև դողդողում է
Զերմ օդի մէջ և սողում է
Հովտի միջով անուշահոտ.
Մինչ արձակում է մի թարմ հոտ
Անտառն՝ ասես չնչելով,

Սօսափիւնով փըչելով:
Ծովըն անհուն, լայն ու խաղաղ,
Սնդիկի պէս տարածւած,
Երջանակում արծաթաշաղ
Թըլմրութեամբ է համակւած:
Երկինքը խոր, աստեղաշար
Շուրջը կապել է իր ճոխ կամար,
Եւ ողջ երկիրը ոսկէսփիւո—
Ասես դարձած ապարան՝
Կերտւած ձեռքով մոգական
Մի երազի—քաղցրահամբոլը
Ու մեղմանինջ փափկութեան
Մէջ հանդիստ է վայելում:
Պատկերն ամբողջ բընութեան,
Կարձես մաքուը հայելում,
Օդի մէջ է նկարւում,
Խուռն խմբերով է շարժւում
Մըտախոհ ու գալթակղական,
Իբրև աշխարհ կախարդական:

Այս բլրի վրայ բարձրանիստ,
Որտեղից թատրը բընութեան,
Առնելով քաղցը հանգիստ,
Փռւած է այժմ մեր լանդիման,
Ի՞նչ գեղեցիկ է նա, Օրիոն.
Որքան խորհուրդ կայ նրա ծոցում,
Նրա, որ մարդկան է ամբիօն,
Նրա, որ գաղտնիք է և հարցում:
Այն երկինքըն աստեղաշատ,
Նրա քնացած խոր անդունդ,
Օ, ի՞նչ կեանքեր ունի նա շատ,
Եւ որքան մահ ու ծընունդ,
Յաւերժական ամայութեան
Մէջ աստղերն են ձիգ դարեր,
Օտար միմեանց, պաղած, կենդան
Եւ գոյութեամբ՝ միշտ տարբեր,
Բնութիւնը չէ միթէ տէրը
Ստեղծագործող լըղութեան,

Սկիզբն ամեն գոյութեան՝
Հիւլէից մինչ շուրջ՝ աստղերը:
Եւ մահը, որ հսկում է նրան,
Մահ՝ վախճանը գոյութեան՝
Չէ նա միթէ և՛ օրօրան
Դարձեալ նոր-նոր ծըննդեան...
Ա՛հ, իմդ Օրիօն, պէտք է գայ
Այն օրն արգեօք ապագայ,
Երբ թաղանթի կուրութեան
Մարդու աչքից պատռէ
Եւ կեանքի ու բընութեան
Տեսարանը սըփոէ
Իբրև նըկար թափանցիկ՝
Գծւած մտքի մեծ երկունքում,
Ուր ողջ կեանքը վաղանցիկ,
Սկիզբ, վախճանը տիեզերքում
Լինեն պարզ ու անազօտ,
Ինչպէս գարնան առաւօտ...

Գուցէ... Մտքի ասպարէզը՝
Տիեզելքի պէս ընդարձակ՝
Գըրաւել է նրա երեսը,
Սըլաքի պէս է համարձակ:
Իր անհանգիստ տագնապներում
Նա միշտ քննում է և փնտռում,
Եւ այն, ինչ նրան հարց էր երէկ,
Այսօր պարզ էր որպէս ցերեկ:
Աստածները՝ տիպարը
Չեն միթէ մեր, որ հասել են
Մտքի բարձը կատարը,
Ուր մեծ կամքով նրանք հիւսել են
Պայմանն իրանց գոյութեան,
Հասել հոգու վեհութեան:
Դա չէ մարդըն ապագալի
Երազի մէջ մեր ներկալի:

Փասոն
«Գուցէ»—ասիր... Ալո, գուցէ...

Տարակուսանք—խօսքը ահա,
Եւ տանջանքի դուռը բաց է,
Տանջանք դառըն ու անխընալ,
Որ կաշկանդում է միտքը,
Բանում սրտում մեր վէրքը:
Օ, եթէ ես չունենալի
Տարակոյսի մըթութիւն
Եւ եթէ ես գիտենալի
Ողջ ստեղծւածքի էութիւն,
Ո՛րպիսի լայն մի շերտ լոյսի
Կըտարածւէր իմ աչքիս,
Մինչդեռ հիմա տարակոյսի
Խօսքը մահն է իմ մտքիս...
Ի՞նչ գեղեցիկ է բընութիւն.
Որքան, որքան կուզէի
Չուլել նրա հետ իմ գոյութիւն,
Նրա հետ զգալի, խօսէի...

Բայց ի՞նչ է, որ լրսում եմ ես...
Արձագանդը հարում է
Ինչոր մի ձայն, որ մեզմապէս
Խաղաղ օդում մարում է:
Ինչ—որ հառաջ, թեթև ու սուր
Քան զեփիւռ, թւշում է.
Մի ձայն լացող, մի ողբ տըխուր
Լըռութեան մէջ կորչում է՝
Նախ կտրելով խոր մըրափ
Ու թմրութիւնն ըընութեան:
Բայց տես, ահա, քընաթափ
Երկինքն յանկարծ ցնծութեան
Մէջ՝ կարծես լի է ձայներով.
Անտառն դողում է սըթափւած,
Երկիրն թնդում է երգերով.
Ամեն կողմից ասես թափւած
Ճնչունները սաւառնում են
Օդում, չորս կողմ երկնի տակ,
Հըմայք, երկիւղ, դող խառնում են
Նըանք իրար հետ ներգաշնակ...

Ահա նորից խոր լըռութիւն,
Մէկ ահաւոր մեռելութիւն...
Այս ի՞նչ խորհուրդ... Աստղերն վերև,
Խանգարւած քունն իրանց թեթև,
Ճպճպում են զարմացած...
Ահա քանիսն ընկան ցած,
Թողնելով գիծ իրանց ետև...
Ի՞նչ կախարդանք երկիւղած...

Օրիոն

Ահա նորից խօսեց, Հնչեց
Տարօրինակ նըւագը,
Կրկին անտառը հառաչեց,
Տնքաց ձորի յատակը:

Փառօն

Տես, բնութիւնը շունչ է առնում
Պէսպիսագոյն ըգգեստում...
Նա կարծես թէ պար է բռնում,
Զէ դադարում, չէ նստում:

— 31 —

Օ ը ի օ ն

Կարծես թափօր կայ երկնքում,
 Սիրու շըքեղ հանդէսով,
 Կարծես երգում են բարձունքում,
 Կարծես ճեմում են նազով:

Փ ա օ ն

Չեն նրանք արդեօք աստւածները
 Անում հըրաշք թովչական...
 Բայց լըսում եմ հարւածները
 Մի քընարի սքանչական...
 Նորից ամեն ձայն կըտրւեց
 Եւ հազիւ հաղ լըսելի
 Ինչ-որ մի լար կըկին ցըւեց
 Տըխուր շեշտը...

Օ ը ի օ ն

Նազելի

Սաֆօն է դա ջրի եզերքին...

Փ ա օ ն

Սաֆօ...

Օ ը ի օ ն

Միթէ չես գուշակում
 Նրա քընարի: Լըսիր զարկին...
 Գու թոյն լցրիր նրա բաժակում...
 Մենակութեան մէջ տրտմական,
 Ծովի ափին կախարդական
 Ծաղկում է նրա հըմալքը:
 Սյու վայրերում երազախաբ,
 Ուր աստղերն են լոկ վկալքը,
 Զերմացնում է կիրքն ու տագնապ
 Նա իր խանդի վառ, բայց անլոյս,
 Տանջըւում է, փոթորկում
 Եւ տակուին ինք մատաղ կոյս՝
 Սիրու հետ մահն է երգում:

Փ ա օ ն

Սաֆօ... Խնչ գող և ինչ մըրիկ
 Յանկարծ ծագեց իմ սրտում:

Սիրում է ինձ... ահ, ի՞նչ չարիք
Ինձ օրհասից իմ տրտում:
Արեգը, որ այնպէս պայծառ
Վերն փալում է ամեն օր.
Այն աստղերի ոսկեղեն շար,
Որին հարցեր նորանոր
Տալիս եմ ես գիշերները.
Այն երկինքը նուրբ օդով,
Հելլադայի աղջիկները
Իրանց սիրոյ կարօտով,
Դու, իմդ Օրիօն, արիւնս անգամ—
Ոչինչ չէ քաղցը ինձ այնքան,
Որքան Սաֆօն, այդ անթառամ
Պլսակագիրն դիւժական:
Եւ սակայն խիստ աստւածները
Իրար ցասման միջոցին
Բախտիս տըւին հարւածները—
Մընալ օտար վառ բոցին...
Սիրել Սաֆօն... Կարող եմ ես...
Գնւցե... բայց ինքս մէկ օդեղէն

Ու թափանցիկ էակի պէս՝
Սիրոյ զգացումն հրեղէն
Շնչով գալիս է գաղանաբար,
Փաղաքշում է մտքիս հետ,
Խօսում սրտիս անուշաբար
Եւ չըքանում է անհետ,
Ասես թէ ծուխ։ Լուսաւորում
Է նա սիրտը, բայց չէ ալրում.
Հոգուս դատարկն նա լցնում է,
Բայց նըրան չէ տիրանում.
Միտքս բորբոքում, եռացնում է,
Բայց իրա հետ չէ տանում...
Միշտ ներկայ է իմ սառ խելքը՝
Տարակուսող, անհանգիստ,
Սրտիս գրաւման այդ արգելքը,
Ինքնամոռաց ու հանգիստ
Զգացումներում թոյն թափելով,
Պատճառ հոգուս արթնութեան,
Երազիս մէջ ինձ խաբելով,
Միշտ պատրանքից սըթափելով,

Գերի անվերջ գառնութեան:
 Եւ ես սիրել չեմ կարենում,
 Սիրել ինչպէս արբեցած,
 Որ շուրջ միայն սէր է տեսնում,
 Բընութեան մէջ ամեն բանում,
 Կեանքում, իր մէջ—հիացած:
 Օ՛հ, իմ Օրիօն, Ի՞նչ անկատար
 Են մարդիկը... Սիրոյ նեկտար,
 Իբրև պարզե սրտի գեղման
 Բաժին է լոկ քիչերին.
 Եւ տանջանքըն ալդ գըրաւման՝
 Ի՞նչ մահագին...

Թաօնն տշխուը

Կախեց գլուխը, աչքերին
 Նըրա պատեց թաց քօղը. լուռ
 Ու մթագնած՝ ինչպէս մի ցաւ
 Մարմընացած, արձանացաւ...
 Մինչ հեռըւից, իբրև մրմունջ
 Ու տրտունջը ծովալին,
 Իբրև անտառի գաղտուկ շշունջ,

Իբրև հըմայք գերբնալին,
 Հոսում էին ալիքներով
 Լարի ձայներն երկնի տակ,
 Իրանց քաղցըր գաղտնիքներով
 Լցնում օդը բովանդակ:



VII

Սաժօյի երգը

Ազատ զեփիւոն օդն է ճեղքում,
Մեղմ հեծեծանք է հանում.
Օ՛ քընար իմ, սիրոլս մեղքում
Հառաչն է քեզ սընանում:

Երկնակամարն աստեղազարդ
Գեղեցկութեամբ իլ վըսեմ
Գիտէ արդեօք երիտասարդ
Հասակիս բախտը նըսեմ:

Սկայ ծովի և խոր երկնքի
Տարածութեան մէջ անհուն
Լոկ նուրբ գծերն սիրած դէմքի
Տեսնում եմ դէմն կեանքիս շեմքի,
Իբրև երազ մի սահուն:

Պէսպիսագոյն, նախշուն ամպեր,
Որ վազում էք ալդպէս ազատ ու անհամբեր,
Ո՛հ, կանգնեցէք. սիրտս ալրւած
Մեղմեցէք ձեր արցունքով:
Քաղցըր զեփիւու, շուտ մի անցիր. սիրտըս վառւած
Օրօրիր և թարմ խունկով՝
Եթերքիցը հաւաքւած՝
Օ, բեր յաւերժ քուն իմ հոգուն բորբոքւած:

Ծառերի խոր թաւում
Տերևնելն քաղցըր խօսք շշնջում են կամաց,
Որ ինձ լոկ երազումն է գրաւում:
Երկինքըն իմ դիմաց
Պըանքով իր երեսն է գիտում սկայ ծովում,

Որ կեանքիս մութ բովում
Միակն էր ինձ ընկեր և լալիս էր ինձ հետ
Յօղերով ծըփերի իր վէտ-վէտ:

Երկնքի տակ միայն դալարն է ժպտում,
Ուր թիթեռն է թռչկոտում,

Եւ արտուտիկն առւի մօտ
 Իր նըւագն է հնչեցնում զաղ առաւօտ:
 Մինչդեռ ցաւը, որ միշտ իմ մէջ է կոծում,
 Աւաղ, հէք սիրտս է խոցում,
 Եւ գիշերւան խաւարում
 Ինձ Պլուտօնի ոգիներն են չարչարում:

 Ա՛հ, կըթողնեմ այս աշխարհը
 Ամենագեղ հասակում...
 Անհաւասար է նըժարը
 Եւ Արամազդ յաղթութեամբ չէ պրսակում,
 Երբ կայ իմ մէջ անշէջ հուր
 Սիրել այն, ինչ կախարդական ունի ոյժ,
 Ոքն աղքիւըն է երագներիս փափկանոյշ,
 Աւաղ, նաև մահիս դուռ:

 Սափօ, Սափօ, դու դողնում ես...
 Բայց երբ էլ չես լինելու,
 Ելլ կը թողնես աշխարհն, ուր այժմ սողում ես,
 Մի սիրտ էլ չէ ճարւելու,

Որ գէթ ըզգար թէ քո սրտից է զատւած:
 Եւ ինչպէս ասող գիսաւոր՝
 Յայտնըւելով ու փալելով, ազատւած
 Քո կեղեից, կանցնես Լեթան ահաւոր:

 Սիրոյ ցանցըն օրհասական
 Բանտարկեց քեզ վանդակում...
 Թըռիր բարձունքն անհասական,
 Ուր Էլֆելն են բընակում,
 Թոչուն, սիրտ իմ... Վառ գարնան
 Ծաղկանց անձրւն քեզ համար չէ շաղ տրւում:
 Թըռիր եթերքն, ահ, չըքացիր յաւիտեան...
 Վերջին կոծով իմ քընարն է փըշըւում...

 Ո՛վ աստւածներ, արւէք հոգիս,
 Որ յափշտակել էք ինձնից.
 Տըւէք արիւնս, այդ սպեզանին խոր վէրքիս.
 Եւ կամ թէ չէ Արամազդի ահալից
 Նանթն ու ամպրոպ թող գարնըւեն իմ կրծքիս:
 Ա՛հ, պատառւում, պայթում է սիրտս թունալից...
 Փըկեցէք ինձ իմ կեանքից,
 Տըւէք ինձ մահ սիրոյս անմիտ պատրանքից...

VIII

Ս ա ջ օ

Օ, թո՛ղ գու ինձ, ով քարասէրտ...
 Ինչո՞ւ ժամին այս խաղաղ,
 Երբ հանգիստ է առնում իմ սիրտ,
 Յայտնւեցար գու՝ միշտ պաղ:
 Դու տեսնում ես, իմ կըծքում
 Սէրն մըրկում է աշա:
 Եթէ իրանց անէծքում
 Աստւածները անխընալ
 Դատապարտել են քեզ ընդ միշտ
 Լինել դէպ ինձ անտարբեր,
 Ինձ, անբախտիս, ինձ՝ որ նաժիշտ
 Նրանք ընտրեցին՝ ոսկեհեր
 Ապօլօնի, սիրոյս համար
 Դէպ քեզ, Թաօն, նրանք պատիժ
 Սահմանեցին մէկ ուրիշ,

Հարւած կեանքիս ցաւագար.
 Պատիժ լաւերժ սիրելու,
 Տանջանքի գէմ կուելու:

Փ ա օ ն

Մի կշամբիր, Սաֆօ չքնաղ,
 Մէկ էակի, որի վրայ
 Բարկութիւնը մըրկաշաղ
 Սըամազդի արդէն կայ:
 Այս երկնքի կապուտակը,
 Որտեղից քեզ է գալիս
 Երազներիդ ոսկէ շարքը,
 Հետրդ խօսում ու լալիս:
 Այս փիրիւզէ ծովի դաշտը,
 Որ շնչում է կենդանի,
 Որի ալեաց հըպարտ վաշտը
 Քեզ ալնքան է ընտանի,
 Որ լուռ ժամին գիշերային,
 Փաղաքշւելով իր եզրին,
 Շունչն է զւպում՝ աստւածալին

Լըսելու քո քընարին.
Այս անկիւնը ճոխ բընութեան,
Որտեղ լի է անուշաբոլը
Հիւսանքն ծաղկած գեղեցկութեան,
Ուր ամենն է հեզահամբոլը,
Երջանիկ ու կուսական—
Երջանակում մոգական
Ու կախարդիչ այս բընութեան
Թագուհին ես, նրա հոգին:
Երբ քաղաքի խուռն բազմութեան
Մէջ և գետնի յատակին
Քարշ են տալիս սիրոյ զգացման
Մեծ ծարաւը, որին կից
Կակիծի և լի յագեցման
Նողկանքն է միշտ յարակից,—
Այնտեղ սիրտըն է ողորմելի
Եւ միտքը դած քան որդը,
Այնտեղ անխիզն է, պժուալի
Մէրը—կեանքի խորհուրդը.
Բայց այս վայրում կախարդական,

Ամայութեան մէջ դիւթական,
Մէնութեան մէջ խորհրդաւոր,
Երբ—հիացած բընութեան
Յաւերժական ու բախտաւոր
Սիրով—սիրողն լիութեան
Մէջ սիրածին չէ կարենում
Իր բախտն ասել, ոչ շնչել,
Եւ աչքերում նըրա տեսնում
Տիեզերքը, և հնչել
Մի խօսք անգամ չէ յանդգնում,
Ծունկի վրայ է դողով ընկնում,—
Այնժամ, Սաֆօ, օվկէանը
Կրքերով լի փոթորկւած
Սիրոյ անյագ արբեցմանը
Եւ գրա հուրը բորբոքւած՝
Ոչինչ են հենց միայն մի շիթ
Արցունքի դէմ, որ կամաց
Կլկաթէ ցած քո դիմաց,
Իբրև սիրոյ միակ օժիտ
Իբրև սոսկ տուրք քո կամաց:

Այդ ինչ լեզու տարօրինակ,
Որքան ցաւով ու տրտում,
Որքան անուշ ու սիրունակ
Հնչում են նրանք իմ սրտում:
Երան է սա, թէ իրական.
Զառանցանք է խաբուսիկ.
Միթէ նրա ձայնն է սիրական,
Որ խօսում է ինձ յուշիկ:
Ի՞նչ հըրապոլը գայթակղական,
Որն անուրջներ է տալիս,
Ի՞նչ սիրոյ ձայն է լալիս:
Օ, թող մընամ ես հիասքանչ
Չիդ ժամեր այս երազում,
Նոր խօսք հասնէ մինչ իմ ականջ,
Սրտիս մի նոր տայ յուզում:
Օ, թող ինձ սէրդ ճաշակել,
Որ միշտ ինձնից փախչում է,
Ձայնիդ մէջ նոր բախտ գուշակել,

Որ սիրտս արդէն թովչում է:
Ա՛հ, յուսի կայծ գէթ ըզգայի,
Ազօտ նշոյլը սէրի,
Ինչպէս ասալը՝ լուսնկայի,
Եւ քեզ պաշտող ու գերի:
Բայց սէր է քո ասածը.
Աստւածներն ինձ գըթացին
Արդեօք, թէ իմ լըսածը
Վերջին միրաժ է քըմածին,
Վերջին մընաս բարեւ կեանքին,
Ծաղը ինձ սիրոյս իմ ախտից,
Անզուսպ տագնաալն իմ զըկանքին,
Վերջին նըզովքը բախտից...
Օ՛ գեղեցիկ ես այս ժամին
Գու իբրև նոր Ապօլօն,
Կարծես տեսիլ մէկ անմարմին...
Բայց վախենում եմ, Թաօն.
Մի գաղտնի գող է ինձ տիրում,
Ահաւոր գոյժ է նա բերում...
Ասա, արդեօք խորհուրդ նըսեմ՝

Իր նախանձից դրդըւած՝
 Զի դըբոշմել ճակտիդ վըսեմ
 Արուսեակը մոլեգնած։
 Ասա, դա չէ գայթակղութիւն՝
 Զինւած գիւթիչ զօրութեամբ,
 Դա չէ հեգնիչ խարեութիւն՝
 Իմ դէմ լարւած չարութեամբ...
 Դու չե՞ս զրկւած ինձ կորցնելու
 Եւ ցասումը յագեցնելու
 Զար գիցուհու... Դու լուռ ես...
 Դու գողում ես... տըխուր ես...
 Ա՛հ, Արուսեակ; պայծառ կեղծիք,
 Սիրոյ անյագ ու յանցապարտ
 Խարեութեան տէ՞ր գեղեցիկ,
 Հըապոյրներիդ վրայ մեղապարտ
 Հագած դիմակ աստւածալին,
 Ատում եմ քեզ...

Փաօն

Մի հարւածիք
 Աստւածուհուն քո մարդկալին
 Տըկարութեանդ համար: Գիտցիք,
 Պղտոր աղբիւրը սիրային
 Տանջանքներիդ՝ բընութեան
 Եւ քո մէջ է միմիայն:
 Ոստի թաւում ահա թափում
 Է արցունքներ նուրբ խօսնակը.
 Ահա անտառն է սթափում—
 Սիրակարօտ եղունակը
 Հառաչում է ու թանչում.
 Ահա վայրի աղաւնեակը
 Կորցրած ընկերն է կանչում:
 Նրանք սիրում են որպէս կեանքի,
 Նոյնպէս մահի էլ համար...
 Օ՛ մի լա դու. իմ զրկանքի
 Ցաւը վերքից է վատթար:
 Ճաշակել էլ լի բերկըանքի

Աղբեկը ջինջ, անըսպառ
Նա, ով գիտէ ջերմ սիրել,
Մինչ յաւիտեան է թշշւառ
Ով առանց այն է ապրել:
Սիրոյդ թոյնն ես ճաշակում,
Օ, ինչո՞ւ չես գուշակում
Գերութիւնը իմ զգացման,
Օրհասական այդ պատիժ,
Կեանքիս ըսպին ցաւանիշ
Մի սիրտ առանց արբեցման,
Սիրոյ թովիչ հիացման:

Ս ա ֆ օ

Ես լըսում եմ ինչ որ հառաջ,
Նա գալիս է անտառից...
Սու, այդ ծովն է և իր շառաջ...
Սու, հեկնկանք է լարից,
Որ գեռ այսօր արտասւում էր...
Խեղճ իմ քընար... Եթէ նրան
Ես ջախջախեմ... Ա՛հ, խօսւում էր

Առասպելում, թէ կորան
Այդպէս անմահ երգիչներ...
Ահա, ինչ-որ քրքիջներ
Հասնում են իմ ականջիս...
Նրանք վերեկց են գալիս...
Աստւածներն են վրաս ծիծաղում,
Արուսեակը, Արամազդ...
Ինչո՞ւ սիրտը չէ խաղաղում.
Պատառւելու է պատրաստ...
Ա՛յո, այո... մի տըխուր օր,
Նոյնպէս տըխուր, ինչպէս այսօր,
Երբ ես երգում էի սէրըս,
Գեղեցկութիւնը ֆաօնի,
Թափւում էին արցունքները,
Բայց նրա պատկերը կենդանի
Ես չը տեսայ իմ դիմաց,
Ինչպէս այսօր... Օ՛, կամաց.
Մի ընդմիջիր լըռութիւնը:
Արտիս ձախն եմ ահա լըսում...
Ա՛հ, չէ. թոյլ է նրա տրոփիւնը,
Նա ինձ ոչինչ էլ չէ ասում...

Եւ ասես վիթ մի վիրաւոր,
 Յանկարծ մի կողմ նա ցատկեց
 Ու հեռացաւ... մինչ սըգաւոր
 Քնարին նորից նա զարկեց:
 Եւ գետակի կարկաչներով՝
 Դալալիկներն հոսեցան,
 Մըմունջ, արտունջ, հառաչներով
 Համատարած սահեցան...
 Իսկ նա կոյսին էր հետեւում
 Տըխուր աչքով ու անձայն:
 Եւ այդ ժամին՝ սրտի ցաւում՝
 Նա անձեց իր ունայն
 Կեանքի օրերն լաւագոյն,
 Ծաղրանքն իր ճակատագրի,
 Բախտը լքւած մի տարագըի,
 Եւ ով կասէր դառնաթոյն
 Սէրն անմահ դիցուհու,
 Իր սրտի մեծ տիրուհու:

54

IX

Երկնածիրը գունատւում է:
 Թեթև մէգը փարատւում է:
 Դժգոյն լուսինն, արծաթի պէս,
 Կապոյտ երկնի լուռ խորում
 Մընացել է պաղած կարծես,
 Մինչ իր կըրակն էր վառում
 Պայծառ աստղը վաղորդեան:
 Գեղեցկութիւնն բընութեան,
 Երկինք, երկիր ու ծովը
 Սըթափում են կախարդական
 Մի երազից: Նուրբ հովը
 Մեղմ սահում է, չիմանալով
 Իր համբոլիին գալթակղական
 Ուր տալ հանգիստ: Ողջոյն տալով
 Արշալոյսին, թռչունների
 Զայների տակ երդում է

Երկիրն համայն: Ոչխարների
Հօտը խաղաղ նիրհում է,
Հօրիզոնաւմ նկարւելով,
Ալիքների պէս շարւելով:
Հովիտ, լեռներն ու դալարի
Հանդարտութիւնը տարած
Վըճիտ երկնի լայն կամարի
Փաղաքշանքի տակ մարած՝
Դեռ կիսաշունչ են, սառած:
Քընաթաթախ պատանի
Հովիւն ըսկսաւ ածել շըւին
Եւ իր հօտին ընտանի
Չայնով երգել: Որպէս առւին
Խոխոջներն արծաթաձայն,
Կլկացնում է նա յստակ.
Մերթ շըւիի և մերթ իր ձայն
Հնչում են քաղցրը նըւագ:

Հովիտի երգը
Այս գիշերւան երազում
Վախ կար հոգոյս, իմ հոգոյս:
Լուսինն նրա հետ էր խօսում
Անուբը մէջ խորասով:
Եղեգնը մեղմ լալիս էր,
Եղեգնում աստղն էր գողում,
Երկնքից ցած գալիս էր
Զըերի մէջ ու լողում:
Հեռուն ծովի երեսին
Վառւեց, մարեց ինչ-որ հուր,
Շուշանն հետը նարկէսին
Ափին լացին, ահ, տխուր:
Եւ այդ երազն եթերքից
Իշաւ թեփ վըայ հովի
Եւ ընկղմւեց իմ երգից
Մէջը սիրոյ խոր ծովի:

Ասես ոգի թափառական,
Իբրև անկոչ մէկ ուրւական,
Ֆաօնն դէմքով տխրամած
Հեռւում ահա երեաց:
Լըսեց երդը, և իր քայլը
Ուզզեց գէպի հովիւլ,
Մինչ առաջին սփռեց փայլը
Լեռան ետից արել:

Փ ա օ ն

Հովիւ, երդածդ բնչ է:

Հ ո վ ի ւ

Բան... Սէր և մահ:

Փ ա օ ն

Այս, ունեն

Այդ երկուսն էլ նոյն իմաստը.—
Վախճան, ուր միշտ յանդում է

Ամեն բան... Մեծն Արամազդը,

Որ վերն ահեղ թնդում է,

Քեզ ներշնչեց այդ հոգին:

Հ ո վ ի ւ

Գիշերն առւի լոլագին

Գեղելն խօսնց այդ իմ որտին:

Փ ա օ ն

Ում համար է այդ մեղեդին:

Հ ո վ ի ւ

Սրտիս համար... Նոյնալէս լուսնի

Եւ աստղերի, և ծաղկի

Այս առաւօտն որ կըբուսնի

Ու կըբացէ, թռչնակի

Որ հետս մէկտեղ կանչում է,

Ծովի համար, որի քնէած

Հօրիզօնում հանգչում է

Մոլար նալեացքը՝ ընկղմւած

Անուրջի մէջ... Նոյնպէս մի զոյգ
Աչքի համար՝ թովիչ ու մոյգ,
Սև սախ անփոյթ գանգուրների,
Որ շրջանակ են պատաժ
Նուրբ գէմքի շուրջ... Գառնուկների
Հետ գիւղ էի ես մտած,
Երբ լանկարծ լոկ մի վայրկեան
Տեսալ նըրան. երկչոտ աչքով
Ինձ լուռ նալեց գողարիկն այն,
Նայեց, խնդաց արծաթաձայն
Զարկով, լրուեց, մի նայեացքով
Մելամաղձիկ, խօսուն, խորունկ
Նորից նայեց—անհետացաւ...
Անցան օրեր, անցաւ գարունք,
Էլ նա աչքիս չերևեցաւ...

Ք ա օ ն

Հովիւ, որ մի վայրկենական
Տեսիլն անդամ գիտես սիրել,
Որ նըւագով գերելնական

Գիտես նըրան քո դէմ բերել,
Ասա, ի՞նչ ես զգում սիրելով:

Հ ո վ ի ւ

Անոյշ տանջանք, որ գերելով
Հոգիս, սիրցնել է ինձ տալիս
Ոմենայն բան...

Ք ա օ ն

Դու չես լալիս,
Այլ բերկրում ես, ասա, արգեօք
Կարծում ես որ բախտով ժպտուն
Երջանիկ ես...

Հ ո վ ի ւ

Ի՞նչ հարց... Անհոգ

Ու երջանիկ, իմ զըւարթուն
Գառնուկի պէս: Այնպէս չէ,
Երջանիկ եմ... Աղաչէ
Արամազդից իմ բախտըս:

— 59 —

Բընութիւնն է գըրսխտըս.
Ես ապրում եմ վառ աստղերի,
Լուսնի հետ և՝ իմ տաղերի,
Գառնուկներիս որ ինձ այնքան
Ընտանի են. իմ պատւական
Ելներիս հետ, որ միակ
Ընկերներս են հուատարիմ,
Սիրում ինձ իբր մօտ մըտերիմ,
Ե՛ւ գետերը, և՝ սոխակ,
Ե՛ւ արձագանքն երգերիս
Եւ տեսածն աչքերիս—
Ահա աշխարհն իմ սիրուն,
Կեանքը սրտիս վառվըռուն:
Երջանիկ եմ ինձ ըզդում
Իմ կեանքում և փափագում:

Փ ա օ ն

Գնւցէ... բայց դու բախտաւոր ես
Լոկ քեզ համար... իսկ կարող ես
Արդեօք ըզգալ քեզ երջանիկ

Երջանկութեամբն ուրիշի...
Զէ, դաշտալին դու շուշանիկ՝
Աճում ես լուռ մի խորշի
Մէջը, շարքին քեզ նըման
Ծաղիկների, որոնք նոյնպէս
Օտար ու խորժ են քեզ, ինչպէս
Ինքը նըլանց...

Հ ո վ ի ւ

Զարմացման

Հանելուկ է ասածըդդ...
Զըգիտեմ ես... Ա՛հ, իմ հոգին
Երկիումս է, լըսածըդ
Երգումս պահւած է իմ հոգին...

Փ ա օ ն

Աւաղ, նըրա արտաօւագին
Կլկոցներով կարող չես լալ
Դու տանջանքները դառնագին
Ուրիշների, որ ունենալ

Քեզ պէս դըրախտ չեն կարող:
Երջանիկ ես գու քո անմեղ,
Քո անգիտակ ու սիրող
Հոգովը, բայց միայն ալստեղ
Բընութեան մէջ և քեզ համար...
Միթէ կարող չէ մեր աշխարհ
Լինել նոյնպէս բախտաւոր
Հասուն գետակ մի հոգով...

Եւ այդ հարցը՝ սըդաւոր
Սրտով, յուզւած մի մտքով՝
Տալով ինքըն իրան, ֆաօնն
Աչքը գըցեց խոր հօրիզօնն
Ու հեռացաւ—թափառական,
Տարագրւած մէկ ուրւական:



X

Ծրտում, սպիտակ ու նազելի
Ինչպէս վայրի նունուֆար,
Ճոփ ալիքներն իր վարսերի
Փուած վերան մերկ ուսերի,
Ներքին դողով, սիրահար
Սաֆօն ափին կիսապառկած
Անակնթարթ մէկ աչքով
Դիտում էր ջուրն: Զըւարթ ընկած
Իրար ետից, թըռիչքով
Ու խաղերով, ալիքները
Ասես անթիւ փիրուզէ
Գըլորելով՝ եզրները
Հասնում են և մետաքսէ
Մազերն թրջում Սաֆօլին:
Նրանք մըմունջով գալթակղական,
Կարձես խոստում սիրալին,

Գողտուկ սահում են տրտմական
Կոյսի առաջ: Նրանց զբօսանքը
Եւ նրանց ուռչելն ու նազանքը
Ափ են քարշող հրապուրով:
Նրանք իրանց սառ համբոյրով:
Կոյսին ուզում են հրմայել,
Խոստանալով սիրավայել՝
Կարծես՝ բերկրանք ջըրի տակ
Եւ մէկ անմահ յիշատակ:
Եւ նրա աչքին երեսում են
Մանկահասակ պարիկներ.
Նրանք գեղադէմ՝ բարեռում են
Սիրուն գլխով, ալիքներ
Վերտովելով կայտառ խաղով,
Եւ հնչաձայն մի ծիծաղով
Լցնում օդը բովանդակ:
Մերժ ելնում են ջրի երեսին,
Մերժ էլ իջնում են յատակ,
Մերժ հնչեցնում են միասին
Երգ սիրային, տխուր կոյսին

Իրանց մօտը հիւր կանչելով
Եւ հըմալքով տանջելով:
Եւ ինչ են աչտ մեղմ երգերը,
Սրտի ձայնն է Սաֆօլի,
Ճիչը գաշտում ամայի.
Նրանք բուժում են նրա վէրքերը,
Թէ չար գոլժն են շուտ մահի:
Ապօլօնն է, որ առաքեց
Պարիկներին կոյսի մօտ,
Թէ Պոսէյդոնն նրանց վարակեց
Մի գիտումով նախանձոտ...

Պարիկների խմբերզը

Այս կապուտակ գաշտերի,
Այս էմալլ է վաշտերի
Բընակիչներ գեղանի՝
Ունենք սիրոյ սպեղանի:
Անսէր, առանց կարօտի,
Հեռու կեանքից սընոտի,

Չունենք ոչ ցաւ, ոչ տենչանք,
Անծանօթ է մեզ տանջանք:
Պաշով ոսկէ արևը
Խըլում է մեր բարեը,
Աստղերն են վրան մեր շրթանց,
Ուր լուսինն է շոյում նրանց:
Մարգարիտից ճօխ շարւած,
Պէս-պէս բոյսով զարդարւած՝
Ունենք վանեալ ապարան,
Ծովաշխարհի թանգարան։
Զըրերն նազիկ հոսանքով,
Գունակ-գունակ զբօսանքով,
Գըլորում են դարուց դար
Սամ, բուստ, զմրուխտ ու գոհար։
Անյս ըսպիտակ, եկ դէպ ծով,
Այստեղ քաղցր է մահի բով.
Մարմինդ՝ շուշան ձիւնակոյտ՝
Թո՛ղ գրկէ սառ ծովն ընդ փոյթ։
Դու կըլինես թագուհի,
Արքայական տիրուհի,

Մենք հընազանդ քեզ նաժիշտ,
Երգող, պարող, երաժիշտ։
Ծիածան-գոյն բոյսերից,
Մեր մետաքսէ վարսերից
Մենք կըհիւսենք քեզ պըսակ,
Որ նախանձէ Արուսեակ.
Ալիքների երեսից
Մենք աստղերի վառ լոյսից
Գիշերն թաքուն կըքաղենք
Եւ քո զլիին կըմաղենք։
Արեգակի շողերից,
Զըրի գոհար ցօղերից,
Արշալոյսի վարդ քողից
Եւ ծըփանքի մեղմ գողից։
Մենք կըհիւսենք քեզ խասէ,
Մարմնիդ ըզգեստ մետաքսէ,
Եւ ալիքներն տալով խոյս՝
Կ'երգեն նըւագ քեզ մինչ լոյս։
Յիշողութիւն ու անցեալ,
Կորուստ սիրուդ դառնացեալ՝

Իբրև երազ մէկ աղօտ՝
Կանցնեն անհետ, անծանօթ:
Եւ զուր փնտրածդ մոռացում
Դու կըդտնես մեր ծոցում,
Ապարանքում ծովանիստ՝
Յաւերժական մի հանգիստ:

ՅՈՒՂ

XI

Ինչպէս ոգի թափառական,
Ինչպէս տխուր մէկ ուրւական,
Դէպի ափերն է կրկին
Ուզզում մոլար իր քալլը
Փաօնը լուռ, տիրագին:
Ուր է աչքի վառ փայլը,
Ուր է ճակատը պայծառ.
Նա մռայլ է, որպէս մութը,
Ցուզւած հոգին վշտահար:
Միթէ շարժւեց նրա գութը,
Տըւեց նըրան կոկծանք
Կոյսի անյոյս հեծեծանք,
Միթէ մի նոր ըզգացումով
Վառւած նա սէր է տենչում,
Եւ մի թաքուն հիացումով
Սիրած անունն մրմնջում...

Եւ դէպ եզրը՝ սիրահար
Գնում է քալով նա մոլար:
Ահ, ի՞նչ. կոյսը նըրա առաջ
Մենակ ընկած է ափին,
Ականջ տալով ծովի շառաչ:
Ինչպէս ոսկէ վառ արփին
Ամսլի ետև թաք կացած՝
Վաղ ցօղերն է թափում ցած,
Նոյնպէս գէմքը նրա նազելի
Սլեաց տակից ճոխ մազերի
Արցունքով է ողողւած,
Մինչ իր գլխին է կախւած
Սիրուն ժայռը մտազբազ—
Տապանաքար ու դագաղ:

Փ ա օ ն

Սաֆօ, Սաֆօ, մաքուր տեսիլ
Վառ երազի, երաշտին
Բուսած ծաղէկ գու նրբածիլ,
Արցունք վերջին հրաժեշտին,

Ա՛հ, գըթութեան աստւածների
Կարօտ սոխակ, տանջւածների
Ո՛վ թագուհի, որիդ, աւաղ,
Աներեոլթ մի զօրութիւն
Առաջնորդում է դէպ դագաղ,—
Թող քեզ լինի իմ օրհնութիւն:
Յանուն գաղտնի մեծ խորհրդի
Այս կենսատու բնութեան.
Յանուն երկրի մութ անդնդի
Եւ եթերքի վեհութեան.
Յանուն երկնի վառ կանթեղի,
Յանուն կենզան, վալ աստեղի,
Յանուն և իմ դիցուհու,
Ամրոնի անմահ տաղի
Եւ նրա ընտրած երգչուհու.
Յանուն կեանքի ու գոյութեան,
Եւ Պալլասի իմաստութեան,
Եւ արթնութեան ըզդաստի,
Եւ էութեան իմաստի,—
Օրհնում եմ քեզ անբախտութեան

Քո այս ծանըր ըոպէին,
Օքհնում եմ քեզ վեհ զօրութեան
Հանդէալ սիրոյդ գերընալին:
Լըսէր. երգւում եմ անունով
Արամազգի մեծազօր—
Ո՛չ արշալոյսն իր ողջունով,
Ո՛չ զիշերն իր մթութիւնով,
Ո՛չ Ոլիմպը լուսազօր,
Ո՛չ ցասումը չարութեան,
Ո՛չ բողոքը գերութեան,
Ո՛չ դիցուհուս չար գրգիռ
Եւ ոչ երկինքն շանթակիր
ԶԵն կարող քո թովիչ պատկեր
Խըլել աչքիս առաջից,
ԶԵն կարող քո անունդ ու սէր
Զատել սրտիս հառաչից:
Որպէս ճիչըն անյուսութեան,
Ճիչըն անդարձ կորստի,
Իմ մէջ հըզօր է հմայութեան
Թալիսմանը, զոհողութեան

ՏԵնչըն անխօս նըւաստի:
Ինչպէս շողի արեգական
Գէմ ամպերն են տարագիր,
Նոյնպէս սիրոյդ կախարդական
Բոյի հանդէալ՝ վշտակիր
Հոգիս տանջող չար ոգին
Հալածւեցաւ, իմ անգին,
Եւ իմ առաջ բացւեց շըքեղ
Մի նոր աշխարհ ցնծութեան,
Ուր փայլի մէջ ամենազեղ
Թագուհի ես հրաշագեղ
Զընաշխարհիկ թովչութեան:

Ս ա ֆ օ

Լըսէր, լըսէր. ալդ խօսքերը,
Նրանցում թաքուն վառ կըքերը
Խառն են դառըն թոյնի հետ,
Հերիք ճեղքես իմ վէրքերը
Որիւնահօս, սիրաւէտ:
Առմիտ խունկ ես ծխում երդման

Մի յուսահատ, հեք էակին,
Դու գեղեցիկդ դիցանըման
Դու սիրւածըդ Արուսեակին:
Վախենում եմ քեզ հաւատալ,
Զար դիցուհին ինձ չի գըթալ...
Ա՛հ, հեռացիր, Ֆաօն, ինձնից:
Զգում եմ կարծես—այն տարփալից
Արուսեակի համբոլը
Պէտք է հպւեն քո շրթներին,
Քո սեաթոլը գանգուրներին,
Զգալ քո խանդիդ հրապոլը,
Խմէ հրալի քո տչքում
Սիրոյ նեկտարն արբեցուցիչ—
Եւ քո կրծքին, քո դրկում
Լըսէ սրտիդ զարկը յուզիչ...
Աստղը բախտիս իմ տրտում
Վերջին անդամ է փայլում
Եւ քո տեսքով զմալլում...
Ա՛հ, հեռացիր, ինչու տլստեղ
Ինձ տանջելու դու եկար.

Գալթակղական հըրաշագեղ՝
Ծաղլում ես սէրս ցաւագար:
Ես պէտք չեմ քեզ, քեզ չեմ ուզում...
Բուռն է հոգիս: Տագնապ, յուզում,
Կիրք ու նախանձ, ցաւ ու ցասում
Մաքառում են իմ հոգում
Եւ միմեանց գէմ փոթորկում...

Փ ա օ ն

Ես այստեղ եմ՝ քեզ հընազանդ
Կերի, պաշտաճ դիցուհիս:
Խորտակում եմ սիրոյ աւանդ,
Որ կաշկանդեց իմ հոգիս
Սրուսեակին հեշտասէր,
Որ քեզանից խլեց իմ սէր:
Խորտակում ես այն նըժար,
Որ յանցապարտ նախանձից
Մեզ բաժանեց միմեանցից.
Եւ բերում եմ սիրոյդ տաճար
Սրտիս պատառն լաւագոյն,

Իբրև տուգանք քո սիրոյն.
Բերում եմ այն ալրելու,
Նրա խունկը քեզ բուրելու.
Եւ վարդամատն մինչև այդ
Լինել պաշտող ոտքիդ տակ,
Ապա աստղը վաղորդեան
Ողջունել քո վառ աչում
Եւ մի վերջին հառաջում
Անշնչանալ յաւիտեան:—
Սիրում եմ քեզ...

Աղաչանքով՝

Չոքէց ծնկով մեղապարտ:
Թովիչ էր նա լի տենչանքով
Գեղեցկութեամբն իր հըպարտ:
Չըհաւատող իր բախտին
Եւ երդմանըն անյաղթին:
Սափօն դողդոջ ու համբացած
Նրա առաջն էր անշարժ կեցած,
Պատրաստ լինել անձնատուր...
Յանկարծ մի ճիչ աղէկտուր,

Ինչպէս վէրքից պատռւած
Ելաւ կրծքից սիրատապ
Եւ իբր շուշան կըտրւած՝
Նա ցած ընկաւ ուշաթափ...
Տեսիլ էր ալն, թէ իրական.
Արուսեակն էր բարկացայտ
Աչքով՝ կանգնած գերբընական
Գեղեցկութեամբը՝ հէնց այդ
Վայրկեանին նրա լանդիման,
Վըիմառու աննըման.
Մինչ ոտքի տակ աստւածուհու,
Իբր հարւածով դառնաշունչ.
Ստացած պատիմն իր դիցուհու,
Ֆաօն ընկած էր անշունչ...

(3)

XII

Դէմքըն անդորր, գունատ, ինչպէս
Լծի ջուրը լուսնասփիւռ,
Ուշաթափ էր Սաֆօն: Որպէս
Վարդ ժապաւէն, երկնի երես
Այդն էր կապել: Մեղմ զեփիւռ
Փաղաքշում էր կոյսի այտեր:
Քընարն ընկած էր նրա մօտեր՝
Կորցրած իր երգն ու անուրջ,
Ինչպէս մահը, լուռ էր շուրջ.
Եւ առաքեալն Ապոլոնի՝
Մուգան գլխին Սաֆօնի
Զընաշխարհիկ ու գեղանի
Մի երևոլթ, անմարմին
Ասես էակ, այդ ժամին
Մեղմ արցունքներ էր թափում
Կարծես ցողով երկնալին.

Սըրսկելով ըսթափում,
Նունչ էր տալիս Սաֆօլին...
Յանկարծ կոյսը ցնցւեց մարմնով:
Աչքը բացեց... Մուգան ժպտաց,
Ժպտաց զունատ մի ժպիտով—
Ու չքացաւ...

Մենակ մընաց,
Նայեց չորս կողմ... Ո՞վ էր գնաց...
Ի՞նչ ահաւոր ունախնութիւն,
Կարծես մեռել է բընութիւն,
Մեռել է ծովն... Ո՞ւր է ֆաօն...
Եւ մութ կերպով լիշեց Սաֆօն,
Որ այդտեղ էր նա քիչ առաջ,
Աչքում վառ կայծ, կըծքում հառաչ:
Խօսքով քաղցըը, հըրալի,
Գալթակղութեամբ հրաշալի:
Նա այդտեղ էր. նա ազերսում,
Նա երդում էր, իր սէրն ասում
Եւ լալիս էր տենչանքն իրա,
Ինչպէս սուզը շիրմի վերայ,

Կեանքի՞ ըոսկէն այն քաղցրագոյն,
Երազն անհուն բերկրութեան
Միթէ կորաւ լաւիտեան...
Եւ նա լիշեց անագորոյն
Տեսիլը չար դիցուհու,
Յիշեց—սոսկաց... երգչուհու
Բախտի լաւերժ հալածող՝
Նա չըթողեց ճաշակել
Սկրոյ հուրը... հարւածող
Օրհասն այդ էր գուշակել,
Իբրև չար բու, նրա համար.
Միթէ բոլորն անդարձ կորաւ,
Կեանքի բուքը փչեց, տարաւ,
Տեսիլն հարւածն էր վերջին,
Մահի գոյժըն առաջին...
Ասես խալթւած ճիչ արձակեց
Եւ քընարի վրայ լարձակւեց.
Նայեց նըրան, սեղմեց կրծքին,
Խփեց մատներով մի զարկ... կըկին...
Եւ մի բուռն հնչունով

Վերջին ցաւի կանչիւնով
Լարերը խիստ դողացին—
Կըտրւեցան, լուեցին...
Եւ երգչուհին՝ խելացընոր՝
Վազեց դէպ ժալու մենաւոր,
Նայեց չորս կողմ քարափից
Եւ դողալով սարսափից
Արձանացաւ լանկարծ...

ԱՌՀ, Ի՞նչ.

Մէկից մթնեց շուրջ ամեն ինչ.
Հըզօր տարերքը ըընութեան
Խառնակւեցան և նրա հանդէպ
Ծովի ալեաց մոլեգնութեան
Պոսէյդոնն էր հրամայում.
Երեքժամին նրա անվրէպ
Կայրութիւնն իր չէ խնայում:
Երկինք ծածկւեց ամարերով
Շողաց, շոնթաց շանթերով,
Կարծես կոյսի մահն են ուզում

Բընութեանը ցասկոտ լուզում
 Նրան հրում է դէպի ծով...
 Օ, բօթ ահեղ, օ չար բով:
 Եւ ցնցւեցաւ Սաֆօն, կարծես
 Չորս կողմամբն բան ուժգնապէս
 Պայթում, քանդում է, խորտակում...
 Սաֆօնի սիրտը ծով ասես՝
 Կերջին անգամ է փոթորկում,
 Սղաղակում...

Ս ա ֆ օ

Օ՛; անէծք ձեզ,

Ո՞վ կատաղած աստւածներ,
 Ո՞ր անխընայ ձեր հարւածներ
 Մատաղ կեանքիս հասցըրիք,
 Անէծք ամբողջ զօրութեամբը
 Եւ գառնութեան խստութեամբը
 Սիրուս, որ վրաս բեռցըրիք.
 Անէծք ոլիմին ձեր ստեղծագործ,
 Իր երկունքում ու խորհուրդում.

Անէծք կամքին ձեր ոճրագործ,
 Ձեր բարկութեան մութ անդնդում
 Թաքուն պահւած ատելութեան
 Եւ ձեր սիրոյն ու բերկութեան.
 Անէծք անլագ ձեր կրքերին,
 Ձեր կայանին անշարժական
 Ձեր հոգուն գոռ, անողոք
 Եւ ձեր կեանքին յաւերժական
 Սկսած երկնքից մինչ զըժոխք...
 Կեանքիս վշըրում եմ ես շղթան,
 Ո՞վ, դիցուհի գեղեցկութեան,
 Եւ թող լինի իմ սև մահ
 Պըսակ սիրոյդ անլագութեան
 Եւ անկմանըդ գոյժն ու ահ...
 Ո՞հ, անէծք քեզ...

Եւ հոգու

Ճիշով թըռաւ՝ ահարկու
 Դատարկութեան մէջ օդեղէն,
 Ասես թեի վրայ հըբեղէն,

Մի երազի սիրակոծ—

Եւ Սավօլին՝ ալեկոծ

Ծովըն առաւ իր պաղ ծոյ:

Լէւկադիալի ջըրերի վրայ,
Ուր սեպացած՝ տխրատես
Ժայռը կարծես մինչև հիմա
Արտասուքով փրփրադէզ
Ալիքների է՝ լալիս,
Հնչիւներ են գեռ գալիս
Մի քընարի հեծեծող,
Որոնք գեփիւռն սըլացող
Յափշտակում է ու տանում
Եւ մեռցնում հեռաստանում:
Գիշերալին լըռին ժամին,
Սըւծագին վարդագոյն
Մեղմաշըշունջ հոսանքներով
Հնչում են երգ թովչական
Պարիկները զբօսանքներով
Կազմած թափօր յաղթական...

Հէնց որ լուսինն աղու դէմքով

Ծովի ծոցից է ծագում,

Հէնց որ սոխակն սիրոյ վէրքով
Թաւ ծառում է նըւագում.

Հէնց որ գիշերն թեթև քողով,

Արտասւելով գոհար ցօղով,

Նիրհած ծովին է տիրում

Եւ աստղերի խմբերն դողով

Ողջ երկինքն են զարդարում,—

Ինչոր ըստւեր մի նազելի

Թափառում է ափերին,

Տալիս անուն մի սիրելի

Եւ լացացնում քընարին:

Մինչդեռ ժայռի գլխին մենակ

Մուզան նըան է գիտում,

Կաթիլ-կաթիլ ու շարունակ

Արցունք թափում է տրտում:

Բայց երբ յանկարծ ստւերը տխուր

Լըսում է չար, աղէկըտուր

Զայնը բուի հառաչին,

Իբր արձագանք իւր կոչին,
Ինչողէս մի ճիշ զգացումների
Աւերակաց կոյտի մօտ,
Ինչողէս սրտի կոծումների
Չարագուշակ ուր սե լոյժ,--
Նո շուտ սահում է ջըրերի
Վրայ և այնտեղ է սուզւում,
Մինչդեռ խումբը պարիկների
Նրա գալուստից է յուզւում:
Եւ ամայի ծովի վերան
Եւ քընաթափ գլխով լերան
Սահում է դառն մի խանդով
Կտրած լորի վերջին կոծը,
Ապա ցաւի աւանդով
Պաշարում է ծովի ծոցը
Լըռութիւնը գիշերւան,
Որպէս մահի պաղ ստւան:



Տ. Նազարեանի Հքատաբակութիւնները

I Պատրիերական

1 Աղբեկը ամսագիր	83 թ.
»	84 »
»	85 »
»	86 »
»	87 »
»	88 »
»	89 »
»	90 »
»	91 »
»	92 »
»	93 »
»	94 »
»	95 »
»	96 »
»	97 »
2 ՏԱՐԱԶ շաբաթաթերթ	90 »
»	91 »
»	92 »
»	93 »
»	94 »
»	95 »
»	96 »
»	97 »
3 ԱԻՕԽԸ ամենօրեայ լրագիր	92 »
»	93 »

II Գիրք

Ա. Կ.

1 Քնար խօսնակ	— 50
2 Պօղնանի ուսուցչի օրագիրից	— 20
3 Երկու մանրավէտ	— 15
4 Սոլսակ և խոզարած	— 15
5 Հարս և սկասուր	— 15
6 Զըլըցէ կընանոյը պէնըփէշակը	— 25
7 Երեխաները և նըրանց բարեկամները, պատկերագրեալ	— 40
8 Փայտաշէն լիրճթից սպիտակ տունը, պատկերագրեալ	— 60
9 Հոկայ մըջին, պատկերագրեալ	— 40
10 Ժան Բատիստ Լիւլի մանկութիւնը	— 10
11 Ոսկի ձկնիկ	— 30
12 Նոյնը երկլորդ հրատարակ	— 5
13 Մշակւած և անմշակ ծառի կեանքը, պատ.	— 30
14 Տարաճնի Արամի արկածները, պատ.	— 50
15 Քրիգիօֆ գիւցակն, պատ.	— 40
16 Արեգնապան	— 40
17 Տորք անգեղ և չայկանուշ գեղեցիկ	— 40
18 Դալի ադաթներան պատկերներ	— 1 —
19 Ճաշակ	— 25
20 Տեղագլական նամականի.	— 30
21 Արևելեան վիպաշխարհ	— 20

22 Բասկական Լեգենդա	— 20
23 Գիւլէ	— 15
24 Գալիս	— 10
25 Ազա Մահմէտ Ջահը Ջուշում	— 2
26 Մինը այսպէս միւսը այնպէս	— 1 —
27 Պարսկական զրոյցներ	— 5
28 Վերջին վէրքեր	— 30
29 Մըցումն հասարակութեան հետ	— 60
30 Դե պատ.	— 30
31 Դեմօն պատ.	— 30
32 Վիհելմ Թէլլ	— 20
33 Խոշընդուռ	— 50
34 Գինեգործի աղջիկը	— 15
35 Կնոջ կոչումը	— 15
36 Խօլիբա	— 10
37 Փէրօ	— 15
38 Սկիզբն երկանց	— 1 —
39 Փրիզօլին	— 5
40 Նրա մայրը	— 5
41 Կոլումբոս	— 5
42 Եւանգելիսան	— 5
43 Նէր հայ ուսուցիչներին	— 5
44 Եկեղեցի կինսազը. յաւելած Երկ. IX դ.	— 2 —
45 Հուգենոսներ	— 5

III Օրացոյցներ

	Բ. Կ.
46 Օրացոյց 90 թ. փոքրադիր	— 10
47 » պատկերագրդ	— 15
48 » 91 կանանց համար	— 40
49 Ծոցի	— 5
50 Գրպանի մեծադիր	— 15
— Տախտակ	10
— Պատճեն	— 50

IV Պատերիներ և նկարներ

1 Պարոյց չայկան և Մովսէս Խորենացի	— 25
2 Ս. Սահակ	— 25
3 Ս. Մեսրոպ	— 25
4 Տըգատի մլպատթիւնը	— 25
5 Արտաշէս թագաւորի մուտքը չոռո՞մ	— 25
6 Խրիմեան հայրիկ (մեծադիր)	1 —
7 Ս. Իզմիրեան պատրիարք (մեծադիր)	1 —
8 Ս. Երեմիայ արքեպիսկոպոս	— 10
9 Ս. Ա. արքեպիսկոպոս Սեղբակեան	— 10
10 Գրիգոր Արծրունի	— 10

11 Զերենց	— 10
12 Բաֆֆի	— 10
13 Ռաֆայէլ Պատկանեան	— 10
14 Միքայէլ Նալբանդեան	1 —
15 Ագամեան	— 60
16 Ղ. Աղայեանց	— 10
17 Ս. Ջահազիկեան	— 10
18 Բերկրանք	— 60
19 Թօմէօ և Ճուլիէթ	— 30
20 Ռաֆայէլի Գրեգէնեան զալիկէց՝ Մագոնա և Հրեշտակներ, չորս պատկեր	— 50
21 Թուրքինսկ՝ Ցիսուս Տիրամայր	— 10
22 Մոգերի երկրպագութիւնը	3 —
23 Ցիսուս Խաչակիր	3 —
24 Արշալույս	3 —
25 Զմեռ	— 50
26 Ցուրտ է	— 25
27 Անառակ որդի	1 —
28 Մայրիկի ննջարանում	— 50
29 Հարէմի աղջիկը	— 50



V Պատուիչըներ ճշնապահու. վրայ

1 Վեհափառ Հայրիկ	6 —
2 Ս. Իզմիրլեան պատրիարք	10 —
3 Գրիգոր Արծրունի	3 —

VI ԱԼՅՈՄԵՐ

1 Կողկասեան տիպեր	— 30
2 Գեղարւեստական ալբոմ	— 30
3 Յիսուսեան գալերէց	— 30
4 Ալբոմ-ալմանախ	2 —



